խոյի կայսերն Ռուսաց կոչեցաւ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ յամին 1834 · Ռուսք շինեցին 'ի նմա բերդ և զօրանիստս, և մաքրարան վասն եկեղցոյն ՅՕՍԱՆՆԵԱՆ երկրի · կանգնեցան և եկեղեցիք և շուկայք : Այժմ իբրև 2500 տուն բնակիչք են նորա, որոց 2000 տունք Հայոց : Սահմանք քաղաքին զուարճալիք են և ամենաբերք — Իբր երիւք ժամուք 'ի հիւսիսոյ քաղաքին առ գետեղերբն և Ղանլըճա գիւղիւ կայ անուանի մենաստանն Մարմաշէն շինեալ յելս ԺԴ դարու 'ի Պահլաւունեաց հօրեղբարց Գրիգորի Մագիստրոսի, որոյ կանգուն կայ գմբեթաւոր եկեղեցի անսիւն, և յիշատակք շինողացն և նորոգողաց ԺԱԻ դարու, յորոց մի և Մարիամ զշնոյ Ավիսազաց, և թերևս յանուն նորա կոչիցի, և ոչ որպէս ոմանց կարծեցաւ Մարմարաշէն կոչիլ, 'ի սակս նիւթոյ քարանցն, այլ Հերևի 'ի նմա մարմար, բայց կիՀ կարմիր : — Պանդուկան կամ Պէնդըլան 'ի հիւսիսոյ ևս չորիւք ժամուք, առ որով աւերակք Գըզըլ-խաչ կոչեցեալ : Նոյնքան ևս 'ի վերոյ 'ի հիւսիսոյ Խաղանձը գեօղ 'ի սահմանածայրս վիճակին առ Ապոցաւ, յորոյ թիկանց ամբառնայ Աղլոխան լեառն 9400'· և 'ի հարաւոյ նորա Խարխաւ լեառն առ որոյ ստորոտով աւերակք հնոյ շինի մեծի՝ Խարաբա կոչեցեալ : — Ի հարաւոյ կիւմրոյ կայ Գարգիլիւ աւան 300ովք հայաբնակ ամբք : Ի հարաւոյ նորա Պայընդուր գեօղ յելս Ախուրեանի հանգէպ խառնրգոց գետոյն Զըլարբայ · առ սովաւ 'ի հերուն (1853) Օսմանեանք միջամուխ եղեալք հարան 'ի Ռուսաց : Ի հարաւոյ հեռագոյն մերձ 'ի ծայրս սահմանաց վիճակին առ գետակաւն՝ որ թուի հիմն Ռահ՝ կայ Զըրբաս գեօղ, առ որով կամուրջ յԱխուրեանն : — Յարևելս Կիւմրոյ նշանաւոր տեղի է Ղըշլա գիւղ 'ի ստորոտս Արագածու, յորում կայ Հոռոմայ Ոխան մենաստան շէն և եկեղեցի հոյակապ շինեալ 'ի Զաքարիայէ սպասալարէ յամին 1201 · մեծագոյն ևս եկեղեցի կայ յԱՐԴԻՒ գեղջ յարևմտից Ղըփչախայ, յանուն Ս · Լուսաւորչի : — Ոչ պակաս քան զ'80 գիւղօրայք են 'ի վիճակին Կիւմրոյ :

Բ · ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳ

127 · ՀԱՅԿԱԿԱՆՆ ՆԱՀԱՆԳ Ռուսաց՝ որպէս կոչեցին նոքա, ստորին արևմտեան մասն է բաժնի նոցին, և յայնմ կողմանէ սահմանս ունի զՕսմանեան և զպարսկային Հայս, յԱնւոյ ցԿաղզուան՝ առ Ախուրենիւ · անտի ընդ արևելս խոտորեալ և անջրպետեալ լերամբք ցՄասիս, և անտի ցԵրասխ ըստ հիւսիսի արևելից · և ապա Երասխաւ սահմանի ցՈրդուպատ, որ զՀարաւային սահմանն ձևէ · յարևելից լերինք Սիւնեաց կամ Գարապաղու սահման հատանեն ցարևելեան հարաւային ծայրս ծովուն Գեղամայ, և այլ լերինք պատեալք զելիւք նորա · և 'ի հիւսիսոյ նորա և նահանգին լերինքն Էջնի-Մեյդան, և Արագած, և անտի ցԱնի՝ գաւառն կիւմրի · և ունի Հայկական նահանգս զմեծ մասն հին աշխարհացն Այրարատայ և Սիւնեաց : Բովանդակ երկիրն կոչի և ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԱՅ, և պէսպէս արոհի 'ի մեծ և 'ի փոքր գաւառս, յերկուս կամ 'ի չորս կամ յութ · ըստ յեանոցս կամ ըստ մանր բաժանման՝ գաւառք կամ վիճակք են՝ Սարտարապատ, Սուրմաղի, Ջէնգիպազար, Կէօք-չայ, Շարուր, Տարալեղէզ, Նախիջևան, Որդուպատ, յորոց հինգ առաջինքն 'ի կողմնակալութեան Երևանայ են բաժանեալք 'ի վիճակս (մասալ) 17, երկուքն՝ Նախիջևանայ հինգ վիճակք, յետինն առանձին կողմնակալութիւն հինգ վիճակք · յորս միահամուռ են գեօղք և հանգրուանք 1110 · և 'ի նոցուն 750 բնակեալք, 360 ամայիք : Իսկ բնակիչք 180,000, կիսով չափ Հայք :

128 · Ա · ՍԱՐՏԱՐԱՊԱՏ գաւառ յարևմտեան հիւսիսակողմն Հայկական նահանգին կայ, զԱխուրեանն ունելով յարևմտից և զԵրասխ 'ի հարաւոյ, յելից ընդ գետս գաշտին Վաղարշապատու, և 'ի հիւսիսոյ զգաւառն Կիւմրի · և ունի 'ի հիւսիսակողմանն զԱՐԱԴԱՆՈՏՆ գաւառ հին, 'ի հարաւոյ զԵրասխաձոր, և զմեծ մասն մի Այրարատեան դաշտին · յորում են աւելի քան զ'120 գեօղք, և բազում նշանաւոր տեղիք բնականք, շինականք և պատմականք · և առաջին 'ի բնական արձանս՝ լեառնն Արագած յանուն Արմենակայ որդւոյ Հայկայ, (Աղանէզ ըստ ռամկայ) երկրորդ 'ի բարձրութեան 'ի չափեալ լերինս Հայոց, շեղջաձև ամբարձեալ քառահերձ գագաթամբ, լիՃ 'ի միջակին ունելով, և պաղածս ծծմբոյ 'ի շրթունսն, բարձրագոյն գագաթանցն հիւսիսակողմանն է 12871'· մի 'ի հրաբղխից կանուխ ժամանակաց աշխարհիս Հայոց : Ի լեռնէ ասսի բղխէ Մեծամօր գետ միւս, և ընդ հարաւ խաղացեալ՝ յարևմտից Էջմիածնայ խառնի 'ի Քասաղ կամ Քարսա որ է Կարբոյ-ջուրն, և երկոքին միանգամայն ընկալեալ և այլ ևս վտակս՝ թափին յԵրասխ · կոչի Մեծամօր և Շամբի-ջուր վասն եղեգանցն շամբից, յորս ասեն անկեալ զՏրդատ 'ի խոզաձև պատուհասին : Յելից գետոցս ընդ մէջ սահմանաց Սարտարապատայ և Կէօք-չայի կայ Աբոյի լեառն 7910' բարձր, առ որոյ ստորոտով բանակեալ ասեն զԱրայն Գեղեցիկ, և անդ անկեալ մարտնչելով ընդ Շամիրամայ · այժմ Գառնը-էարբ կոչի լեառնն, վասն զի վերուստ 'ի վայր հերձեալ է 'ի բուռն ցնցմանց երկրի յառաջին ժամանակսն (15) :

129 · Արևմտեան հիւսիսակողմն գաւառիս է ԹԱԼԻՒ վիճակ 20 գիւղօրէիւք, և համանուն աւանաւ յարևմտեան ստորոտս Արագածու 'ի բարձու 4254', 'ի վերայ արքունի ճանապարհին Կիւմրոյ, 50 հայ տամբք · են առ երկ նորին աւերակք մեծի շինի : Ժամաւ հեռի է 'ի նմանէ և Նորն Թալին, ամայի, և առ երկոքումբք ևս լքեալ և կիսաւեր եկեղեցիք, արձանագրութեամբք Ժ դարու, և հնագոյն ևս մատուռն շինեալ 'ի Ներսէհ Աշտարշունեաց և Շիրակայ տեառնէ յԻԴ դարու · և աշտարակ մի և պարիսպք հզօրք առ Նորին : — Յելից Թալնայ կայ Անի աւան, երբեմն ամերոց Թագաւորաց Աշտարակունեաց : — Մոտք գիւղ 100 տամբք 'ի հիւսիսոյ Թալնայ, և 'ի սմա գեղեցիկ հին եկեղեցի ուռնանկիւնի : Յելից Թալնայ վիճակին կայ ՍԵՒՏԼԻ և ԱԽՍԱԽԼԸ վիճակ, 20 գիւղօրէիւք, յորս և ԹԱԼԻՐ աւան 'ի տեղւոջ հնոյն Արուաձայ, ուր Գրիգոր Մամիկոնեան կանգնեաց իւր ա-